

ՄԵՆԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարեկան 6 ռուբլի, Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ»,
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւններ համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Նպաստաւոր պայման. Ներքին ՏԵՍՈՒ-
թիւն. Մամուլ. Երկրաչափից փնտրութիւններ
օգտին. Նամակ Մօսկվայից. Նամակ Սամար-
կանից. Ներքին լուրեր. —ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒ-
թիւն. Նամակ Շվեյցարիայից. Արտաքին լու-
րեր. —ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ-
ՆԵՐ.

ՆԱԽԱՏԱՐՈՐ ՊԱՅՏԱՆ

Այն օրը, որ կովկասեան նաւթը սկսեց
գործածվել ոչ միայն իբրեւ լուսաւորու-
թեան նիւթ, այլ և իբրեւ վառելիք
գործարարներու, նա ստացաւ մի առան-
ձին կարեւորութիւն արդիւնաւորութեան
համար: Ռուսաստանի շոգեմաների մեծա-
ւոյն մասը և ներքին նահանգների գործա-
րանքներից շատերը թողել են քարածուխ
և փայտ վառելը և անցել են նաւթին:
Ներկայումս Կովկասում ստացվող 323 մի-
լիոն պուդ նաւթային արդիւնների 224
միլիոն պուդը, կամ ամբողջ քանակու-
թեան 70%՝ գործ է ածվում իբրեւ վա-
ռելիք:

Միջոցով կովկասեան նաւթը սկսում է
Ռուսաստանի գործարարական արդիւնա-
բերութեան զարգացման գործի մէջ յայտ-
նի դեր կատարել, որ աւելի ևս նշանա-
կութիւն ստացաւ վերջին տարին, երբ
քարածուխի և փայտի գինը սաստիկ բարձ-
րացաւ և գործարարները դժուարացու-
թեան մէջ էին զբաղւած վառելիքի պակա-
սութեան պատճառով: Ռուսաստանի գոր-
ծարարատէրերի մի խոշոր խումբ դիմեց
նոյն իսկ ֆինանսների մինիստրին, խնդրե-
լով, որ նաւթը էժանացվի, որպէս զի գոր-
ծարարները կարողանան գործածել նրան
իբրեւ վառելիք: Այդ նպատակով գործա-
րանատէրերը առաջարկում էին արտասահ-
ման արտադրվող նաւթի վրա առանձին
մաքս դնել, որպէս զի դժուարանար նաւ-
թի արտահանումը և նա ստիպված մնար
Ռուսաստանում: Սակայն ֆինանսների մի-
նիստը չէր յարգեց այդ խնդրը, որովհետեւ
սեւ նա մեծ նշանակութիւն է տալիս այն
բանին, որ Ռուսաստանի նաւթը կամաց
կամաց նուաճում է արտասահմանեան վա-
ճառանոցները և շատ անգիւրում աճող
մրցում է ամերիկական նաւթի հետ, իսկ
եթէ գործարարատէրերի ցանկութեան
համաձայն նաւթի վրա մաքս դրվէր, այն
ժամանակ կովկասեան նաւթը կը կորցնէր
արտասահմանում ձեռք բերած իր դիրքը
և այնուհետեւ այլ ևս անկարող կը լինէր
նրան յետ գրաւել:

Մնում է, որ Ռուսաստանի գործարա-
րատէրերը կամ ամեն կերպ աշխատեն է-
ժանացնել նաւթի տեղափոխութիւնը Կով-
կասից դէպի ներքին նահանգները, կամ
խնդրաւորաց լինեն թեթեւացնելու նաւ-
թի վրա դրված ակցիզը և կամ գործա-
րաններ հիմեն Բագուի շրջակայքում, որ-
տեղ վառելանիւթը այնքան էժան է:
Առհարկ և արդիւնաբերութեան դիրեկ-
տոր Վ. Կովալեւսկիի նորերս արտայայտեց
այն միտքը, որ Կովկասի նաւթային շրջա-
նը բնականաբար դէպի ինքը պէտք է դը-
րակ այնպիսի ձեռնարկութիւններ, որոնք
անյայտ են եղել Կովկասին, բայց պա-
հանջում են մեծ քանակութեամբ վա-
ռելիք:

Այդ նկատողութիւնը ճիշդ է, ուստի
կարեւոր է, որ մեր գրամատները օգտ-
վեն նաւթաշրջանի տուած այդ առաւե-
րութիւններից և հիմնարկներ մի շարք
արդիւնաւորական ձեռնարկութիւններ
մեր երկրում, որոնք մշակելն երկրի հա-
րուստ հում նիւթերը և դրանով զարկ
տալին Կովկասի արդիւնաւորական զար-
գացման:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Վասիլի Վելիչի Կատարեալայէ աշխարհի
առակ դարձաւ: Կատարի հայտնի Վովկասից
հեռանալու առթիւ ուսաց մամուլի համա-
րեա ըրոր օրգանները յայտնեցին իրանց խո-
րին գտնուակութիւնը, միահամուռ կերպով
դատաւարեալով այդ պարունին, իբրեւ ազգայ-
նական խառնակութիւններ և թշնամութիւն
սերմանող մի մարդու: Թիֆլիսի ուսաց
մամուլի օրգաններից Վելիչի մասին խո-
սեց և «Кавказский Вестник» ամսագիրը
իր երկրորդ համարում, որ լոյս տեսաւ ինչի-
նոսել աւելի խիստ ու հիմնաւոր կերպով քան
մայրաքաղաքի լրագիրներն են խօսել, ամսա-
գիրը, ի հարկէ, չէր կարող Բայց դրա փոխա-
րէն նա բերում է Վելիչի «պատմութիւնը»
մի գիծ, որի վրա ուրիշները ուղարկութիւն
չեն դարձրել:

Աւագ—բացականչում է ամսագիրը—պէտք
է խոստովանել, որ պ. Վելիչի Կովկասում
անցկացրած երեք տարիների ընթացքում,
ունեցաւ մի այնպիսի աջողութիւն, որի նը-
մանը դեռ չէ վիճակվել մեզ մօտ ոչ մի հրա-
պարակասիւն. պ. Վելիչի մասին խօսում
էին ամենքը և ամեն տեղ, ամեն օր նոր
և նոր մանրամասնութիւններ էին տարած-
վում նրա մասնաւոր կեանքից, նրանով հե-
տաքերով էին ամենքը: Անաղոպ հրա-
պարակասիւն տուած այդ նշանակութիւնը
մենք տրամադիր ենք վերագրելու մեր հա-
տարակութեան նոյն այն արարներին, որոնց
այնքան կատարի կերպով մտարկում էր Վե-
լիչի: Լինելով մի հասարակութիւն՝ գուրդ
գիտակցական կեանքից, ամեն մի հոգեկան
կերակրից, զուրկ որ եւ հակումից դէպի
ամեն մի բան, որ բարձր է առօրեայ կրթե-
րից, զուրկ բարոյական որոշ յենակներից,
մեր գաւառական հասարակութիւնը, զբաղ-
ւած լինելով բամբասանքներով ու չարախո-
սութիւններով, որոնք ևս դրանց ամեն
տեղ, տարածում է դրանց, չնչում է դրան-
ցով: Հասկանալի է, որ այն լրագիրը էր, որ
ընդ իւրաքանչիւր տողը լին է հայտնաբերել
և բամբասանքներով, իւրաքանչիւր տան
ցանկալի բարեկամին էր դառնում ձիւղը է,
պ. Վելիչի իր հրատարակութեան տաղվին
օրերից զրկվեց մի քանի բաժանորդները,
որոնք պատկանում էին նրա հայրածած ազ-
գութեան, բայց մենք ինքներս տեսնում
էինք, թէ ինչպէս այդ վրդովված հայրենա-
սէրները, որոնք ցուցամոլութեամբ պատ-
մում էին իւրաքանչիւր հանդիպողին, թէ
իրանք պ. Վելիչի բաժանորդ չեն, այնու-
ամենայնիւ կուրծնելով յօդադրութեամբ
կարողւմ էին նրա հայրական յօդաւածները:
Նոյն իսկ այն երեւելի ազգայնական հպար-
տութիւնը զսէ էր բերվում չարախոսութեան
սեղանի վրա: Այսպիսով պ. Վելիչի տա-
մենքն էին ձանաչում, շատերն էին հայտնում,
բայց ամենքն էին կարողում, մի քանիները
վախում էին և «յարգում»:

Որ այս խօսքերի մէջ դառն ճշմարտութեան
մի մեծ քանակութիւն կայ—այդ մասին վիճել
չէ կարելի: Անկասկած, Վելիչի աջողութիւ-
նը ուրիշ պատճառներ էլ ունէր, բայց այստեղ
իշխաւորութեամբ պատճառ են, մեր կարծիքով,
շատ իրական է, շատ ուղիղ կերպով բնութեա-
նելի ֆիզիքական սովի ենթարկված մի ժո-
ղովուրդ այլասեւում է սնունդի պակասու-
թիւնից, դառնում է վախ ու կիսամեռ, թող
ևս ուրբմիւլի, նոյն երեւոյթն է ևս առաջացնում
ևս մտաւոր, հոգեկան սովը, երբ նա ճարա-
կում է կուշտ փոր, բայց դատարկ սիրտ ու-
նեցող մարդկանց բազմութիւնը: Իսկ մտաւոր
սովի, հոգեկան այլասեւման շատ և շատ նը-
շաններ է ցոյց տալին հենց այն իսկ ազգու-
թիւնը, որին հարածում էր Վելիչի: Այդ նշան-
ներից մէկն է ամսագրի ցոյց տուած վերաբը-
մունքը դէպի տպագրական այն կեղտը, որ ար-
տադրում էր բանաստեղծ—հրապարակասեղ
(երբեմն կոկիկ բառերը ինչ սեւահոգութեան
անուն են դառնում), բայց դա մի հասն է այն
բոլոր նշանների մէջ, որ ի ցոյց է հանում մեր
հայ հասարակութիւնը ամեն օր: Նայեցէք այդ
հասարակութեան հիմնարկութիւններին, դուք
կը տեսնէք մի ներսիստան զարոյց, որ 600 ա-

մենաաղքատ երեխաներ է կրթում, բայց որը
միջոց չունի այդ ահագին բազմութեան հաց
և հագուստ տալու. և անա երեխաները նա-
հատակում են—այս բառի բուն նշանակու-
թեամբ—իրանց թշուառ ներքնալարկերում և
անօդ, անլոյս, ցուրտ կացարաններում. երեք
տարի առաջ դպրոցի բժիշկ Վ. Արծրունի մեր
լրագրի մէջ յայտնեց, որ աշակերտներից մի
քանիսը գիշերում են ֆուրգոնների մէջ, որ
համարեա ոչ-մի աշակերտ բաւարար մտնող
չէ ստանում ևս ոչինչ... այդ յուսահատական
փաստերի դիմաց հասարակութիւնը լուռ ու
մուռն զար մնաց: Մտեք այդ հասարակութեան
բարեգործական ընկերութիւնները, տեսէք թէ
ինչ ողորմելի կօպէկներն վրա են պահում ամ-
բողջ բազմաթիւ վարչութիւններ, գրադրու-
թիւններ և մի և նոյն ժամանակ տեսէք թէ
զգգված թշուառների որպիսի բազմութիւն է
ամեն օր յետ դարձնվում «չը կայ» խօսքի հա-
րուածներով: Տեսէք այդ հասարակութեան
թատրոնը—անպատիւ, մոռացված, ընկած, միշտ
դատարկ, բայց միշտ պատրաստ բնագրական
կրակներով նոր հանձարներ հռչակելու իր զըժ-
բախտութեան համար: Տեսէք այդ հասարա-
կութեան մամուլը, գրականութիւնը. որքան
ժանդ ու բորբոս, «սովազարական» վերա-
բերմունք դէպի տպագրական խօսք... Ձեր-
կարացները այս ցուցակը. եղաններն էլ բա-
ւական են ցոյց տալու, որ կայ մի ընդհանուր
մտաւոր սով, կայ մի համատարած հոգեկան
ուժապառուութիւն, որի մէջ իւրաքանչիւր յան-
ցանք իդէալական հասկացողութիւնների, բարձր
զգացմունքների, մարդկայնութեան, պատուի
և այլ այսպիսի անունների դէմ անյարմար բան
չէ համարվում: Եթէ բամբասանորդութիւնը մի-
այն լինէր այդ հասարակութեան արատը, որ-
քան բախտաւոր պիտի լինէր նա: Դժբախտու-
թիւնը հենց այն է, որ միայն բամբասանքը,
չարախոսութիւնը չէ մտաւոր խրոնիքական սո-
վի հետեւանք...

«Տարադի» խմբագիրը սաստիկ ուղեւորվում
է ամեն մի շիկից, հենց այդ պատճառով էլ
այնքան շիկի է մատուցանում հայոց հասա-
րակութեան հին կիշներէն: Անկարելի էր որ
փետրվարի 2-ի յօդաւածը Տիգրան Նաղարեա-
նին չը հասցնէր հրճուանքի եօթներորդ եր-
կինքը: Եւ ձիւղ, ով կարող է այդպիսի շի-
կեօզ կերպով շարադրել, եթէ ոչ Տիգրան
Նաղարեան:

Անցած երկու շաբաթները Մկրտչի տա-
ճարի սպասաւորների փառաբանութեան տո-
նախմբութեան օրեր էին. Պետերբուրգում
սովինք ու Սալիկայի յօդաւածը, Մօսկվա-
յում ու Երմոլայի ուսու դրամատիկ թատ-
րօնի երկու արեգիկներ, Թիֆլիսի էլ յետ չը
մնաց ևս նախ կատարեց վրաց թատրո-
նի յիսնամեակը ևս ապա, չորեքշաբթի, ամ-
սիս 2-ին պ. Աղաթ Սարգսեան—Արեւշատեա-
նի XXXV ամեակը:

Հենց այդպէս էլ, ի հարկէ, կարճապար-
համաշխարհային պատմութիւնը: Բայց նա չի
մոռանալ միտքով նաեւ Տիգրան Նաղարեանի
սքանչելի համեստութիւնը: Այդ ինչպէս է,
կասէ նա, յիշում էք նախ Սալիկային ու Եր-
մոլային, ապա միայն Սարգսեանին, քանի
որ Սալիկայի և Երմոլայի յօդաւածներին
ոչ ոք չէ ասել թէ քանի կայ ուսու ազգը, այդ
երկու անունները չեն մոռացվել, մինչդեռ հայ-
ոց անբաղդ բնին վրա անմասնութեան այդ վը-
կայական հանդիսաւոր կերպով տրվեց Սար-
գսեանին: Այդքան համեստութիւնը առհասա-
րակ չէ սպղում հային, մասնաւոր Տիգրան
Նաղարեանին: Ձարձէ շատ էլ քաշվել, թէ չէ
ձեռք մտաւոր կանուանին. Բօսնիայի, Սալի-
կայի, Միլեն—Սիլիկայի... ինչ են դրանք, ե-
թէ ոչ ամենաշատը հռչակաւոր թատերական
գործիչներ. բայց ճօ այնու ամենայնիւ մահա-
նացու, անցողական, մոռացվելի են այդ ա-
նունները: Օն, ուրեմն, դասակարգութեան
մէջ, հենց գրեմ է մեր չորու, առաջնութեան
արմաւելին ձեռ «ճանաչման» յատկացրէք...

Վաղուց ենք նկատել, որ Կ. Պոլսի հայոց

լրագիրներին Թիֆլիսից ներշնչումներ ուղար-
կողները սանձարձակ ընկալները միայն նկատի
ունենա: Ահա մի նոր դոհար, որ դառնում ենք
«Արեւելքի» մէջ, այնտեղ, ուր լրագիրը խօ-
սում է Ախալքալաքի երկրաչափի մասին:

Այս հանգանակութիւնը որուն համետ չա-
փով մը մասնակցած է նաեւ Թիֆլիզ հրա-
տարակիղ «Լուսնայ» հանդէսը, դեռ կը շա-
րունակուի:

Սրանից աւելի ծիծաղալար զուարճալիք
մեզ չատ քիչ է պատահել տեսնել:

ԵՐԿՐԱՇԱՐԺԻՑ ՎԵՍԱՎՍԵՆՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Ստացանք երկրաչափից ֆեափած գիւղացի-
ների օգտին հետեւեալ նուէրները.

Սարգսեան Սարգիս զիւղից (Ելիմաճի
դաւառ) Յովակիմ Աղա—Պանեանից 100 ռուբլի.
Նուիրատուններն են. 1) Գեղարշու գիւղից
Մ. Միլենսեան, Ա. Կարապետեան, Ս. Արաշա-
մեան, Ս. Հայրապետեան, Ս. Սարգսեան, Յ.
Մալխասեան, Մ. Սարգսեան, Կ. Ղազարեան,
Ա. Ֆարաբեան, Յ. Յարութեան, Գ. Մու-
րադեան, Վ. Թալալեան, Ա. Ալեքսանեան, Ս.
Մալխասեան, Օ. Ղազարեան 1-ական ռ., Պ.
Տէր-Պետրոսեան 50 կ., Ս. Առաքելեան 50 կ.,
Յ. Ղարաբեան 30 կ., Ս. Յովսէփեան 20
կոպէկ, Ե. Մովսէսեան 50 կոպէկ, Ս. Սա-
րգսեան 40 կ., Ս. Ղազարեան 20 կ., Օ.
Նանեան 50-ական կ., Գ. Յակոբեան 20 կ.,
Յ. Ալիբեան, Ա. Ալիբեան, Ա. Յակոբեան,
Կ. Սարգսեան 50-ական կ., Ս. Մալխասեան
55 կ., տ. Գալստիէ Մալխասեան 60 կ., Պ.
Մալխասեան 25 կ., Ե. Մալխասեան, Մ.
Սարգսեան 20-ական կ., Ղ. Մահ—Մարտի-
րոսեան, Ս. Գրիգորեան 25-ական կ., Ա. Սա-
րգսեան 50 կ., Յ. Ենիկերեան 20 կ., Յ.
Յակոբեան 5 կ., Ս. Առաքելեան 25 կ., Ղ.
Մելիք—Ղազարեան 50 կ., Ա. Ալիբեան 60 կ.,
Վ. Վարդապետեան 20 կ., Կ. Միսնասեան 60
կ., Ա. Գալստեան 20 կ., Ե. Ալեքեան 35
կ., Գ. Աւետիսեան 80 կ., Յ. Արքանանեան
20 կ., Ա. Մամիկոնեան 15 կ., Ս. Մարտիրո-
սեան 25 կ., Գ. Միլենսեան, Մ. Տէր-Պետրո-
սեան 50-ական կ., Մ. Յարութեան 55 կ.,
Վ. Մկրտչեան 30 կ., Շ. Մանուկեան, Ս. Գրի-
գորեան, Ե. Արքանանեան 50-ական կ., Մ.
Ներսէսեան 35 կ., Ս. Արքանանեան, Ս. Ներ-
սէսեան 50-ական կ., Գ. Ենիկերեան 25 կ.,
Տ. Գեորգեան 50 կ., Յ. Ներսէսեան 25 կ., Մ.
Միրզայեան 60 կ., Մ. Դեղձունի 25 կ., Վ.
Ենիկերեան 40 կ., Մ. Յակոբեան, Ա. Յակո-
բեան 50-ական կ., Ե. Գալստեան 20 կ., Ս.
Միլենսեան, Ս. Վալսեան 50-ական կ., Մ.
Արաքեան 25 կ., Մ. Յովսէփեան 40 կ.,
Ա. Վալսեան, Ա. Գրիգորեան 30-ական կ., Յ.
Յակոբեան 40 կ., Գ. Բաղդաւան 30 կ., Մ.
Մանուկեան, Գ. Մովսէսեան 50-ական կ., Ե.
Արքանանեան 20 կ., Գ. Կիրիլեան 50 կ.,
Ս. Աւետիսեան 20 կ., Վ. Փանոսեան 25 կ., Ա.
Փանոսեան 5 կ., Ա. Մրաշեան, Ա. Թովմասեան,
Կ. Ղազարեան 20-ական կ., Ս. Թովմասեան 30
կ., Ա. Ղազարեան 38 կ., Յ. Նաղարեան
50 կ., Լ. Յակոբեան 25 կ., Ա. Յարութե-
սեան 10 կ., Ս. Բաղդաւան 50 կ., Մ. Մա-
նուկեան 31 կ., թ. Պետրոսեան 30 կ., Մ.
Գեորգեան 50 կ., Օ. Ղազարեան 69 կ., Յ. Մով-
սէսեան 20 կ., Յ. Մալխասեան 10 կ., Գ. Կա-
րապետեան 55 կ., տ. Լ. Կարապետեան 10 կ.,
Մ. Ալիբեան 21 կ., Մ. Գեորգեան 23 կ.,
Մ. Մարկոսեան 25 կ., տ. Մալխասեան Արաշա-
մեան 20 կ., Մ. Սարգսեան 65 կ., Ա. Սար-
կոսեան, Ղ. Սարգսեան 20-ական կ., Ս.
Թովմասեան 50 կ., Յ. Յարիկեան 30 կ., Ս.
Պօղոսեան 20 կ., Այրի Սօնա Սամբանց 50 կ.,
Վ. Արաքեան 10 կ., Ե. Սարգսեան 20 կ.,
Ս. Սարգսեան 30 կ., Գ. Սարգսեան 10 կ.,
Ե. Օհանեան 20 կ., Գ. Մալխասեան 50 կ.,
Պ. Ալեքեան 35 կ., Ս. Մալխասեան 40 կոպէկ,
2) Սարգսեան զիւղից. Սարգսեան զիւղից
հասարակութեան ամենաւեր Ս. Պօղոսեան 5
ր., Յ. Աղա—Պանեան, Ս. Տէր—Միսնասեան, Ղ.
Մուրադեան, Ղ. Սարգսեան 2-ական ռ.,
Ս. Մարտիրոսեան 1 ռ. 50 կ., Ա. Մանու-
կեան, Ս. Ղազարեան, Ե. Ղազարեան, Մ.
Ալեքեան, Բ. Սարգսեան, Մ. Պօղոսեան,
Դ. քանապ Տէր—Բարադանեան, Բ. Փիլար-
պետեան, Մ. Յակոբեան 1-ական ռ., Ա.
Ղազարեան, Ա. Մալխասեան, Գ. Մուրա-
դեան, Ս. Ենիկերեան, Գ. Մարութեան, Կ. Մա-
նուկեան, Կ. Միսնասեան 50-ական կ., Գ. Միլեն-
սեան 30 կ., Հրէայ Մ. Մովսէսեան 20 կ., Յ.
Սարգսեան, Կ. Սարգսեան 50-ական կ., Յ.
Մարտիրոսեան, Ա. Յովսէփեան 30-ական
կ., Ս. Արքանանեան 50 կ., Ե. Տէր—Յարութե-
ան 40 կ., Ս. Պօղոսեան, Ա. Մանուկեան.

Թ. Պողոսեան, Ս. Յակոբեան 50-ական կ., Յ. Յակոբեան, Դ. Միսնասեան 50-ական կ., Գ. Բարսեղեան 20 կ., Մ. Դաւիթեան 50 կ., Օ. Տէր-Պողոսեան 20 կ., Պ. Պողոսեան 50 կ., Մ. Բարսեղեան 20 կ., Կ. Ալլահիզէրեան 25 կ., Ալիքի Հուրիսեան խաչատուրեան 15 կ., Բ. Եղապարեան 20 կ., Գ. Տէր-Յարութիւնեան 20-ական կ., Ս. Յարութիւնեան, Կ. Կալէեան 50-ական կ., Մ. Միսնասեան, Ա. Յարութիւնեան 20-ական կ., Ս. Կալէեան 10 կ., Ա. խաչատուրեան 15 կ., Ս. Միսնասեան 20 կ., Ս. Սարգսեան 15 կ., Ս. Գեորգեան 20 կ., Կ. Մկրտչեան 10 կ., Յ. Քոչարեան, Յ. Թովմասեան 20-ական կ., Ոմն 1 ր. 80 կ., Ոմն 6 ր. 98 կապէկ:

Բազմութիւն թէժը որոշուած շաբաթներէ 32 ր. 30 կապէկ, որ ժողովուած է ընկերական շրջանից: Պետերբուրգից՝ ուսանող Ն. Փերուսեանից 5 րուրի, որ նստիւն էր Կոչեւով, Իվանիւի, Սլեպե, Փերուսեան, Ալեքսեւսեո եւ 5 ուրիշ անձինք:

Հարգանք 137 րուրի 30 կապէկ: Մինչեւ այժմ ստացել ենք 23695 ր. 81½ կապէկ, երեք ոսկի ուսպի եւ 50 խաչական լիւրա Ուղարկել ենք 20,000 րուրի: Մեզ մօտ մնում է 3695 ր. 81½ կ., երեք ոսկի ուսպի եւ 50 խաչական լիւրա:

ՆԱՄԱԿ ՄՈՍԿՎԱՅԻՑ

Յունվարի 27-ին

Մօսկվայի «Կոմսոնեմտայ» կոչված առաջնակարգ հիւրանոցներից մէկում յունվարի 22-ին տեղի ունեցաւ մի համեստ հանդէս, որ մասնաւոր ընտանոցներէ կրելով հանդերձ՝ զուրկ չէր նաեւ հասարակական անկեղծ համակրանքի ցոյցերէց: Տեղիս ինտելիգենցիային եւ երիտասարդ վաճառականներին դասակարգին պատկանող մի խումբ գրասէր հայեր այդ օրը ճաշկերպով հիւրասիրեցին երիտասարդ հայագետ Իւրիյ Վեռնիկովսկուն, որի անունը քաջ ծանօթ է հայ հասարակութեան եւ որի գրականական գործունէութեան 10-ամեակը լրացաւ անցեալ դեկտեմբերի 27-ին: Հեղինակողներին այդ խումբն առիթից օգտուելով՝ անհրաժեշտ համարեց գէթ այդ փոքրիկ ցոյցով արտայայտել իր չորհրդակալութեան զգացմունքը երիտասարդ հայաստանին, որի մատուցած ծառայութիւնները մեր կեանքին եւ գրականութեան նոյն իսկ այդ կարճ ժամանակամիջոցում անգնան մեծ են եւ գնահատելի: Ուրիշներին է, որ Մօսկվայում տեղի ունեցած այդ համակրանքի արտայայտութեան միացաւ նաեւ հայ մամուլը, որ համակրող խմբի մասնաւոր, ընտանեկան կոչին ամենայն սիրով արձագանք տուին նաեւ ուրիշ տեղերի հայեր, եւ այդպիսով յունվարի 22-ի համեստ հանդէսը սպասածից աւելի շուք եւ փայլ ստացաւ:

Ճաշկերպից, իրեւել պատուաւոր հիւր, ներկայ էր նաեւ երիտասարդ հայագետ հայրը՝ պրօֆէսօր Ա. Ն. Վեռնիկովսկին: Ներկայ եղողներից բանաստեղծ Ս. Շահաբզեան, որպէս աւագը թէ՛ աղբիւրով եւ թէ՛ հեղինակութեամբ, առաջինը ողջունեց յօրեկարին մի զգացված եւ իմաստավոր ճանող, որն ընդունից երկարատեւ ծախսարարութիւններով: Ողջունական ճանից յետոյ, պ. Ա. Մատուրեան կարգաց զանազան տեղերից ստացված հեռագիրները, որոնց թիւը հասնում էր մօտ 40-ի: Հեռագիրներ կային, ի միջի այլոց, Շուշիի եւ Երեւանի հոգեւոր դպրոցներից, Աստրախանի եղբայրասիրական ընկերութիւնից, Պետերբուրգի եւ Կիւլի ուսանողներէից, Բազումի հայ դերասանական խմբից, Նոր-Նախիջեւանի եւ Շուշիի հայ կանանցից, Երեւանի, Բաթումի, Շուշիի եւ Գրօզնիի հայ երիտասարդութիւնից, Պետերբուրգի հայ վաճառական դասակարգից, Աստրախանի համակրողների մի ստուար խմբից (կանայք եւ տղամարդիկ), Գանձակի, Երեւանի, Էլմիթանի, Արմաւիրի եւ Բազումի համակրող խմբերից (Բազումից նաեւ ընծանի), Էլմիթանի ձեռնարանի ղեկավարներից, Թիֆլիսի հայ դպրոցներից եւ երկու խմբագրութիւններից: Հեռագիրների ընթերցումից յետոյ, ուսանող Ս. Քալանթարեան կարգաց Մօսկվայի հայ ուսանողների սրտառուչ ուղերձը: Ծանուց խօսեցին պ. պ. Ս. Շահաբզեան, Ս. Քալանթարեան, որը կարգաց նաեւ «Մայր-Արաքսի», յօրեկարի գեղեցիկ թարգմանութեամբ, Մ. Մամիկոնեան եւ Ա. Մատուրեան: Իրեւել պատասխան այդ ճանապարհի խորը զգացված՝ երկու անգամ խօսեց երիտասարդ հայագետը եւ բերանացի արտասանեց հայերէն մի բանաստեղծութիւն, որը ոգեւորիչ տպաւորութիւն թողեց ներկայ եղողների վրա: Շատ սրամիտ եւ գողորբիկ էր Վեռնիկովսկու հօր ձայնը, որ նա ասեց իր կենաց բաժակը խմելուց յետոյ: Նա մեկնաբանեց, թէ ինչպէս է ինքն էլ հայաստանի շարքն ընկել:

հայաբնիկ մտել: Ճաշկերպից յետոյ երիտասարդ յօրեկարին ներկայ եղողների կողմից՝ իրեւել ընծայ՝ մատուցվից մի չքեղ թանաքաման իր բոլոր սարք ու կարգով:

Հանդիսական

ՆԱՄԱԿ ՍՍՍՐՈՒԿԱՆԴԻՑ

Յունվարի 10-ին

Այս տարի այստեղ չը տեսնված ցրտեր է աշուն: Սաստիկ բուք ու բորանի պատճառով միջին-առիական երկաթուղու երթեւեկութիւնը դէպի Կրասնովոդսկ եւ դէպի Տաշկենտ առաջներում մի քանի օրերով ընդհատվել էր: Այժմ թէեւ հաղորդակցութիւնը վերականգնված է, բայց վերջնականապէս չէ կանոնաւորված, այնպէս որ մարդատար եւ ապրանքատար գնացքներն երբեմն ուշանում են: Ամուր-Դարիայի, Սիր-Դարիայի, Զարաւշան եւ Մուրղաբ գետերի ջրաբաշխ սարերը ծածկված են ձիւնի անապին կոյտերով, ուրեմն դարնան սպասելի է ջրերի յորդանալը, որից կարող են մեծ եւ անապասելի վնասներ առաջանալ:

Մասնագրականների ծոմապահութիւնը, որ տեղացի սարթերի մէջ յայտնի է «Ռուզայ» անունով, վերջնականապէս մօտ է: Աւելորդ չենք համարում մի քանի խօսքով նկարագրել թէ՛ ծոմապահութեան օրերում սարթերն ինչ տեսակ կեանք են վարում: Մասնագրական դարձագած մարդիկ առում են. «ծոմապահութեան օրերում արգելվում է ամեն տեսակ մարմնաւոր դուրսբերութիւն. գուարճութիւն, որ ուղղութիւններին ոչ թէ դէպի մզկիթ, այլ՝ շուայ-լութեան վնասակար վայրեր է տանում...»: Բայց այս խօսքերը չի՞նքու են եւ յարմարեցրած՝ միամիտներին խաբելու համար: Որովհետեւ այն, ինչ-որ պէտք է ասենք, գուրա ենք բերում ոչ թէ բացառիկ դէպքերից, այլ ընդհանուր մասնագրականութեան հոգեբանութիւնից. բացառութիւն կարող են կազմել միմիայն նախապետական կեանք վարող ցեղերը...

Երբ դալիս են ծոմապահութեան օրերը, մասնագրականները ընդհանրապէս եւ սարթերը մասնաւորապէս ցոյց են տալիս իրանց գոյնը: Ծոմապահութեան օրերում սարթերը խմբվում են այստեղի հոշակաւոր «Ռագիստանը»: Սա մօտ հարկւր քայլ տարածութիւն ունեցող մի հրապարակ է: Ընկած Շիր-Դուս, Թիլլա-քար եւ Միրզա-Ուլուզ բէկ հինաւորեց մզկիթների առանձնում: Սարթերը մեծ եւ փոքր, հարուստ, աղքատ, արհեստաւոր բոլորն այստեղ են գանազան խմբերի բաժանված, թղթախաղութեամբ են պարապվում:

Մեր հայ կօլօնիայի կեանքից նորութիւն չը կայ գրելու: Մեզանում հասարակական կեանք, բառիս բուն նշանակութեամբ, չը կայ: Ամենքը, փոխանակ հասարակական հարցերով հետաքրքրվելու, զբաղված են «ապէսական» դատարկ զրուցաբանութեամբ... Մեր կօլօնիայի աղօթատունը իր քանանայով կարծես նրա համար գոյութիւն ստացաւ, որ «իողի կարիք եղած դէպքում» չըլին կօլօնիայի տները... Բայց միթէ այս տխուր երեւոյթը ընդհանուր չէ...

Գ. Պ. Յովհաննիսեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Յինաններն եւ երկրագործութեան միջնորդներն մէջ կայացած համաձայնութեամբ թող է տրված նաւթային արդիւնքներն արտահանել Պարսկաստան եւ Կազար առանց ակցիզի:

Կովկասից եւ ուրիշ տեղերից Թիւրքիա գաղթող մասնագրականներն, ինչպէս հաղորդում են արտասահմանեան լրագիրները, Փոքր-Ասիայի զանազան մասերում տեղաւորելու համար, թիւրքացիներին գործերի միջնորդութեան մէջ կազմված է մի յանձնաժողով, որը պէտք է չըջգայէ Թիւրքիայի անասոյիական նահանգները եւ գաղթականների համար յարմարաւոր հողաբաժիններ ընտրէ:

Պատուային կանոններով մինչեւ այժմ թող էր տրվում ընդունել պատուաւ երկու իմպերիալ կամ չորս կէս-իմպերիալ Այժմ պատուային կարգութեամբ, կանանայով համաձայնեցնել յիշեալ կանոնը այժմեան ոսկէ դրամների իսկական գների հետ, կարգադրել է ընդունել պատու 30 րուրլու ոսկէ դրամ:

Երկաթուղային գծերի վրա կատարվող գործութիւնների առաջն առնելու համար՝ երթագրութիւն կայ խոշոր կենտրոններն մէջ մտցնել դրամների փոխադրութիւն հեռագրի միջոցով: Զանապարհորդը տոմսակ գնելիս՝ իրաւունք

կունենայ յանձնել իր փողերը կասսայում եւ ստանալ այն քաղաքում, ուր որ գնում է:

Մեզ հաղորդում են Դուբայից, թէ Ելենովկա գիւղում կառուցվող ուսուց եկեղեցու օգտին՝ Պետերբուրգից հայր Իօսանն Կրօնշտատսկին ուղարկել է 150 րուրլի:

Այժմ ժողովրդական լուսաւորութեան միջնորդութեան մէջ, բացի այն յանձնաժողովից, որ միջնորդի նախագահութեամբ զբաղված է միջնակարգ դպրոցների բարեփոխութեան հարցով, կազմված են նաեւ հետեւեալ յանձնաժողովները: Լուսաւորութեան միջնորդի խորհրդի անդամ պ. Բ. Աննինի նախագահութեամբ՝ առաջին յանձնաժողովը մշակում է կանոնների մի նախագիծ, որոնց պէտք է ենթարկվեն դպրոցական խորհուրդները: Երկրորդ յանձնաժողովը, որի նախագահը միջնորդի խորհրդի անդամ Գ. Ա. Էզօֆն է, զբաղված է միջնորդութեան մասնաւոր դրամական միջոցների հարցով: Մօտ օրերումն իր զբաղմունքները կը վերջացնէ երրորդ յանձնաժողովը, որ մշակել է տարրական դպրոցներում արհեստների եւ տիկնիկական գիտութիւնների մտցնելու ծրագիրը:

Ստացանք. 1) «Ինչ է անաւակութիւնը» գրքից, հեղ. բժ. Ա. Բուդուրնի, տպագրված Ս. Պետերբուրգում, «Труда» ընկերութեան տպարանում, 1900 թիւին: Գինը 5 կ. 2) «Դոկտոր Թաթոս», կատակ-փոքրիկ մէկ աւարտածով. հեղինակութիւն Իւլիան Ելենովիկ եւ փոխադրութիւն Ա. Սարգսեան-Արեւշատեանի: Գիրքը տպագրված է Թիֆլիսում, Ռոտի-նեանի տպարանում, 1900 թիւին: Գինը 20 կ.:

Հին թղթադրամների ընդունելու մասին առաջին անգամ կարգադրութիւնը անկաւած մեծ բաւականութիւն կը պատճառէ մեր երկրի խուլ անկիւններում, որտեղ շատ կան մեքսած հին թղթադրամներ, որոնց տեղերը սկսել էին լուսահատվել թէ՛ նրանք պէտք է կորցնեն իրանց ինտելեկտիւն արդիւնքներից: Այժմ պետական լաւակը տուել է արտօնութիւն դարձնալ մի ամբողջ տարի գործածել հին թղթադրամները: Սակայն ցանկալի է, որ այդ թղթադրամները օր առաջ հասցնվեն պետական գանձարանին եւ նորից չը կրկնվի անախորժ գործիւնը, որը այլ եւս անկարելի կը լինի վերացնել:

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Մեր քաղաքային կրթի աւագները քանի անգամ կարգադրել են եւ այդ կարգադրութիւնն էլ գրաւոր կերպով պատից կանխել, որ կրթի ընթերցարանում արգելվում է բարձր ձայնով խօսել եւ այդպիսով խանգարել ընթերցարանում լուսթիւնը: Սակայն տողին լսող պիտի: Անդամներից ու մանք սիրահար լինելով քաղցր գրուցաբանութեան, առանց քաշկիւղ, չարտաւարում են ընթերցարանում բարձրաձայն խօսել, անկարելի դարձնելով մեծամասնութեան ընթերցանութիւնը: Այդ պարտններին պիտի առաջարկել մայրահայրի հետք մի աւելի յարմար տեղ ընտրել»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՇՎԵՑՍՐՈՒՑԻՑ

Ժնեւի, փետրվարի 4-ին
Բանից դուրս է դալիս, որ համալսարանում թէ եւս գաղափարի համար մասնաւորապէս քաղաքական շրջաններում աւելի են աշխատում, եւ աւելի համարձակ նպատակներ ունեն, քան թէ սովորաբար ընդունված է կարծել: Այդ գաղափարը, որը աւելի գրաւիչ դարձաւ մասնաւորապէս համարձակ մասնաւորութեան համար՝ մասնաւոր յոյն-թիւրքական անաշուղ պատերազմից յետոյ, այժմ կազմում է մասնաւորական հայրենասէրների զինուոր տեղնը:

Կրեոսցի մասնաւորականների գաղթը դէպի Փոքր-Ասիա, որի համար դուք յաճախ առիթ էք ունեցել լսելու, կազմում է այդ ճաղաքական շրջանից մի օղակ միայն, եւ եթէ կամենում էք՝ շատ անհշուտ օղակը: Այդ շրջան ընդգրկում է շատ երկիրներ... ոչ միայն Փոքր-Ասիան, որ այժմ կազմում է մասնաւորականների քաղաքական անհանգստութեան զբաղակարգը, Եգիպտոսը, ապա Պարսկաստանը, Աւստրալիան, եւ նոյն իսկ Հնդկաստանը միտնում են այդ շրջանի մէջ, իրեւել այնպիսի երկիրներ, որտեղ սպառնալու համալսարանականութիւնը կարող պիտի լինի պարզել իր դրօշակը, ի փառս Մասնագի հետեւողներին:

Պրօպագանդի գլխաւոր կենտրոնը, ինչպէս այդ պարզ երեւում է մի քանի եւրօպացիների կատարած ուսումնասիրութիւններից, որոնք տպագրվեցին Պարիզի հրատարակութիւններէ մէջ, այժմ այլ եւս Կ. Պօլսը չէ, այլ Մեքքա, ուր եկող անթիւ ուխտաւորների միջոցով, այդ պրօպագանդի գլխաւոր ղեկավարը, Օն էր-Մաֆաի շէրիֆը, մեծ աջողութեամբ տարածում է համալսարանական միտքը՝ աշխարհի բոլոր կողմերի մասնաւորականների մէջ: Այդ գործի համար նա անընդատ յարաբերութիւնների մէջ է Կ. Պօլսի հետ, եւ այնտեղից ստանում է դրամական անապին միջոցներ եւ նոյն իսկ անագին թուով քարոզիչ-գործակալներ:

Իրանց գործունէութեան համար կազմած նոր ծրագրի համեմատ, համալսարանական դեկալարները ձեռք են վերցրել Հիւսիսային Աֆրիկայից, գլխաւորապէս Ալժիրից, որը նրանք համարում են արդէն կորած, կամ անդառնայի կերպով Եւրօպայի ձեռք ընկած: Մինչեւ իսկ աւելին՝ Նրանք կորած են համարում նոյն իսկ Եւրօպական Թիւրքիան, որը, թէեւ առայժմ գտնվում է սուլթանի իշխանութեան տակ, բայց մօտիկ ապագայում դուրս պիտի գայ նրա ձեռքից, իրենք մի այնպիսի կէտ, որը գրաւական չունի մասնաւորականութեան որդան մնալու: Այդ հանգամանքը անկաւած չը պիտի մոռանան, օրինակ, մակեդոնացիները, որոնք աշխատում են իրանց հայրենիքի ազատութեան համար, եւ առհասարակ Բալկանի փոքրիկ պետութիւնները, որոնց իղէպին է՝ վնասել մասնաւորական տիրապետութիւնը Բալկանի ամբողջ տարածութեան վրայից:

Երկու անձինք, պարոններ՝ Դէպօնտ եւ Դէկկար (Depont եւ D'Eckardt) իրանց մի դեղեցիկ գրուածքում, որ կրում է «Panislamisme et propagande islamique» վերնագիրը, փաստեր են բերում ապացուցանելու համար, որ այդ պրօպագանդը կատարվում է մեծ հաւատով: Այդ նպատակին նուիրված լրագիրներ են տրպագրվում, քարոզիչներ են ուղարկում, անթիւ տրվում են գրուած: Օրինակ, Սիրիայում ապրող մի «հաւատացող» Ալժիրիցիում ապրող իր մի բարեկամին գրում է հետեւեալ տողերը. «Եկէ՛ք մեզ մօտ՝ այն երկիրը, որ կառավարվում է սուլթանի եւ իսլամի ձեռքով, որ մասնաւորական երկիր է. եկէ՛ք՝ ձեր վերջին օրերը անցկացնելու հաւատացեալների երկրում: Աղանջ հանդերձալ աշխարհում կը վարձատրի պանդիստիներին»: Իսկ մի թիւրք լրագիր, նոյն նպատակով Ալժիրի մասնաւորականներին ուղղած կոչի մէջ յորդորում է նրանց՝ «գալ եւ ապրել օսմանեան երկրի մէջ, ուր միայն նրանք կը գտնեն իսլամը յարգված, մարդկային իրաւունքները ոչ բռնաբարված եւ կեանքը հանգիստ...»:

Եւ մի անվերջ շղթայ այդ տեսակ ստեղծի, որոնք բացարձակ կերպով քարոզվում են՝ յանուն մասնաւորականութեան ապագայ միայնակ եւ վերջնական յաղթանակի: Մի մոռացէ՛ք, այն, որ այդ պրօպագանդը՝ շատ անգամ կատարվում է ոչ միայն յանուն իսլամի, այլ եւ յանուն քաղաքակրթութեան: Եւ իսկ եւս, որովհետեւ ինչպէս փաստերը ցոյց են տալիս, համալսարանական քարոզողների շարքերում կան մարդիկ, որոնք այլ եւս չեն հաւատում Եւրօպայի քաղաքակրթութեան գերելու, եւ ապագայ քաղաքակրթութեան օրորողը համարում են իսլամի երկիրները: Ահա, օրինակ, ինչ է ասում եգիպտացի մի յայտնի քարոզիչ՝ Մուստաֆա-Քամիլը: «Մենք այլ եւս չենք հաւատում Եւրօպայի մեծահոշակ քաղաքակրթութեան. իսլամական հեղինակութիւնը վերածնունդ է օրէցօր, անընդհատ», եւ Փարսեանի երկրի հայրենասէրի կարծիքով՝ գրան է պատկանում ապագան...

Այդ տեսակ ֆանատիկոսներին երեւի շատ է ոգեւորում այն փաստը, որ ներկայումս Մասնագի հետեւողների թիւը 260 միլիօնի է հասնում: Այդ անագին թիւը տարեցտարի աւելում է, կամ խաղաղ պրօպագանդի միջոցով, կամ բռն իսլամացումի միջոցով՝ նոյն իսկ այնպիսի երկիրներում, ուր քրիստոնէական հովանաւորութիւնը իրեւել թէ գոյութիւն ունի: Եւ էլ չեն խօսում այնպիսի դէպքերի մասին, ինչպէս օրինակ, Քրիստոսական պարլամենտի մի անդամի յօժարակամ մասնաւորականութեամբ, կամ որ եւ հայ-ուսմանողի մասնաւորականալը Պարիզում, դէպքեր, որոնք թէեւ հատ-հատ, բայց եւ այնպէս սիրտ եւ հոգի են տալիս համալսարանական ոգեւորված քարոզիչներին...

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Մուշեց գրում են Կ. Պօլսի լրագիրները

Доводено цензурою, Тифлисъ, 7 Февраля 1900 г.